



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019Թ. ԱՌԱՋԻՆ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.....	4
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	6
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱԶԴԱԿԸ.....	10
6. ԱՄՓՈՓՈՒՄ	11

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2019 թվականի հունվար-սեպտեմբերի տվյալներով տնտեսական ակտիվության տեմպերը պահպանվել են: Տնտեսական ակտիվության շարժիչ ուժ են եղել հիմնականում ծառայությունները և արդյունաբերությունը, իսկ ամբողջական պահանջարկի տեսանկյունից տնտեսական աճն ուղեկցվել է ներքին պահանջարկի աճով, մասնավորապես՝ մասնավոր սպառման և ներդրումների աճերով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գրանցվել է տնտեսական ակտիվության իրական արտահայտությամբ 7.1% աճ, ինչը նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից բարձր է 0.8 տոկոսային կետով: Արդյունաբերության ոլորտում գրանցվել է 9.7% աճ, իսկ ծառայությունների և շինարարության ճյուղերի իրական աճի տեմպը նախորդ տարվա համեմատ դանդաղել է: Այսպես՝ ծառայությունների աճը կազմել է 15.5% (նախորդ տարվա 18.8%-ի փոխարեն), իսկ շինարարության ոլորտում գրանցած աճը կազմել է 4.4% (նախորդ տարվա 7.6%-ի փոխարեն): Գյուղատնտեսության ոլորտը գրանցել է 4.3% անկում՝ նախորդ տարվա 4.6%-ի փոխարեն:

Ծառայությունների ոլորտը տնտեսական աճին ունեցել է ամենամեծ նպաստումը, որը կազմել է 5.7%: Հարկ է նշել, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծառայությունների ոլորտի նպաստումը տնտեսության իրական աճին նվազել է 0.2 տոկոսային կետով: Ծառայությունների աճի տեմպի դանդաղումը հիմնականում կապված է նախորդ տարվա համեմատ մշակույթի, զվարճությունների և հանգստի ենթաճյուղի (2018թ.-ի 32.5% աճի դիմաց 2019-ին աճը եղել է 23.8%) համեմատաբար դանդաղ աճի հետ: Ծառայությունների 15.5% աճին հիմնականում նպաստել են մշակույթի, զվարճությունների և հանգստի ենթաճյուղը՝ 5.2 տոկոսային կետով (աճը՝ 23.8%), ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ 3.8 տոկոսային կետով (աճը՝ 18.3%), կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտը՝ 2.5 տոկոսային կետով (աճը՝ 29.6%), տեղեկատվության և կապի ոլորտը՝ 1.1

տոկոսային կետով (աճը՝ 8.0%), ինչպես նաև տրանսպորտի ոլորտը՝ 1.0 տոկոսային կետով (աճը՝ 8.1%):

2019 թվականի հունվար-սեպտեմբերին շինարարության ճյուղի տարեսկզբից արձանագրված աճի բարձր տեմպը աստիճանաբար դանդաղել է: 2018թ. առաջին ինն ամիսներին ճյուղում գրանցված 7.6% աճը 2019-ին ուղեկցվում է 4.4% աճով, ինչը նշանակում է, որ նշված ոլորտում աճի տեմպը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 3.2 տոկոսային կետով: Սա հիմնականում կապված է բյուջեի հաշվին իրականացված շինարարության ծավալների նվազման հետ (2018թ. կազմել է 6.9%, գրանցված աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 23.9%, իսկ 2019-ին կազմել է 1.1%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 3.6%): 2019 թվականի ինն ամիսներին գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը իրական արտահայտությամբ նվազել է 4.3%-ով: Ճյուղի նվազմանը նպաստել են բուսաբուծությունը՝ 3.7 տոկոսային կետով (նվազումը՝ 7.0%) և անասնաբուծությունը՝ 1.0 տոկոսային կետով (նվազումը՝ 2.2%):

Գրանցված տնտեսական աճին նշանակալի նպաստում է ունեցել նաև արդյունաբերության ոլորտի աճը: 2019 թվականի ինն ամիսներին արդյունաբերությունն աճել է 9.7%-ով: Արդյունաբերության աճին հիմնականում նպաստել է մշակող արդյունաբերության աճը՝ 6.1 տոկոսային կետով (աճը՝ 9.3%): Արդյունաբերության աճին դրական է նպաստել նաև հանքագործական արդյունաբերությունը 3.5 տոկոսային կետով (աճը՝ 19.5%)՝ պայմանավորված մետաղական հանքաքարի արդյունահանման 20.2% աճով, ինչն էլ պայմանավորված է Թեղուտի հանքավայրի վերագործարկմամբ:

2019 թվականի ինն ամիսներին կապիտալ ներդրումները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ իրական արտահայտությամբ աճել են 5.5%-ով: 2018 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների համապատասխան ցուցանիշը կազմել էր շուրջ 7.6%:

2019 թվականի ինն ամիսներին տնտեսական աճը պայմանավորված է եղել ներքին պահանջարկի, մասնավորապես՝ մասնավոր սպառման աճով: Սպառումն իրական արտահայտությամբ աճել է շուրջ 12%-ով, ինչը պայմանավորված է եղել տնօրինվող եկամտի և վարկավորման ծավալների աճերով: Մասնավոր սպառումն աճել է շուրջ 13%-ով (նպաստումը տնտեսական աճին 10.8 տոկոսային կետ): Պետական սպառումը նույնպես աճել է՝ կազմելով շուրջ 3.3% (տնտեսական աճին նպաստումը՝ 0.4 տոկոսային կետ):

Տարեսկզբից արտահանման ծավալները վերականգնվել են, և ինն ամիսներին աճը կազմել է 7.9%: Նույն ժամանակահատվածում համանման վարքագիծ է դրսևորել նաև ներմուծումը՝ գրանցելով նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ 4.7% աճ: Արդյունքում արտաքին ապրանքաշրջանառությունը հունվար-սեպտեմբերին ընդլայնվել է, իսկ առևտրային հաշվեկշիռը պահպանել է նախորդ տարվա գրեթե նույն մակարդակը:

2019 թվականի հունվար-սեպտեմբերին արձանագրվել է թույլատրելի մակարդակից ցածր գնաճ (12-ամսյա գնաճը սեպտեմբերին կազմել է 0.5%): Նշենք, որ ՀՀ ԿԲ-ի գնաճի թիրախը 4.0%-ն է՝ ± 1.5 տոկոսային կետ թույլատրելի միջակայքով: Տնտեսական զարգացումներից ելնելով՝ սեպտեմբերին ՀՀ ԿԲ-ը իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով (սահմանելով 5.5%)՝ իրականացնելով խթանող դրամավարկային քաղաքականություն, որը, սակայն, բավարար չի եղել գնաճի մակարդակը բարձրացնելու և թիրախին մոտ գնաճ ապահովելու համար (2019թ. տարեվերջին 12-ամսյա գնաճը կանխատեսվում է 1.5%):

2019 թվականի ինն ամիսների ընթացքում պետական ծախսերի թերակատարման և հարկերի գերակատարման արդյունքում հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա ունեցել է զսպող ազդեցություն:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2019 թվականի ինն ամիսների արդյունքով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ավելի քան 1,148.1 մլրդ դրամ՝ 0.2%-ով գերազանցելով ՀՀ կառավարության իննամսյա ճշտված պլանը: Նշված գումարից 1,138.8 մլրդ դրամը կազմել են ներքին աղբյուրներից ստացված եկամուտները՝ ապահովելով իննամսյա ծրագրի 101.6%-ը, 9.3 մլրդ դրամը ստացվել է պաշտոնական դրամաշնորհների տեսքով, որոնք 62.5%-ով զիջել են իննամսյա ծրագրված ցուցանիշը: Հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը) և այլ եկամուտների իննամսյա ծրագրի կատարումն ապահովվել է համապատասխանաբար 101.7%-ով և 100.5%-ով, որոնք կազմել են համապատասխանաբար 1,079.1 մլրդ դրամ և 59.7 մլրդ դրամ:

2018 թվականի ինն ամիսների համեմատ հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի եկամուտներն աճել են 21.6%-ով կամ 204.2 մլրդ դրամով: Մասնավորապես՝ հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը), այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերն աճել են համապատասխանաբար 21.5%-ով (191.4 մլրդ դրամով), 21.6%-ով (10.6 մլրդ դրամով) և 31.4%-ով (2.2 մլրդ դրամով): Պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացումը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի, եկամտային հարկի, շահութահարկի և ակցիզային հարկի գծով մուտքերի աճով:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները 2019թ. ինն ամիսների ընթացքում, մլրդ դրամ

	Առաջին ինն ամիսների պլան ¹	Առաջին ինն ամիսների ճշտված պլան ²	Փաստ	Կատարման %-ը ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1,084.8	1,145.7	1,148.1	100.2%
այդ թվում՝				
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,019.2	1,061.5	1,079.1	101.7%
Պաշտոնական դրամաշնորհներ	24.2	24.8	9.3	37.5%
Այլ եկամուտներ	41.4	59.4	59.7	100.5%

2019 թվականի ինն ամիսների ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են ավելի քան 9.3 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով ծրագրով նախատեսված մուտքերի 37.5%-ը: Այսպիսի ցածր արդյունքը պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարողականով, որոնց շրջանակներում տրամադրվել է մոտ 4.9 մլրդ դրամ՝ կազմելով ինն ամիսների ընթացքում ծրագրված մուտքերի 19.6%-ը՝ կապված ծրագրերի կատարման ցածր աստիճանով: Մասնավորապես, չեն ստացվել 6 ծրագրերի շրջանակներում նախատեսված 4.7 մլրդ դրամ դրամաշնորհները, իսկ 10 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են ոչ ամբողջությամբ՝ 22.7%-ով, որը կազմել է շուրջ 4.5 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են շուրջ 59.7 մլրդ դրամ՝ 100.5%-ով ապահովելով ինն ամսվա ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտների գծով արձանագրվել է 21.6% աճ, որը հիմնականում պայմանավորված է

¹ Հաստատվել է ՀՀ կառավարության 27.12.2018թ. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ: (Ցուցանիշները ներկայացված են առանց նշված որոշման վերաբաշխման հավելվածի:)

² Հաշվի են առնված հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրության համաձայն կատարված փոփոխությունները:

ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներից, բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարների մուտքերի աճով:

2018 թվականի ինն ամիսների համեմատ ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքն էական փոփոխություն չի կրել: Պաշտոնական դրամաշնորհների հարաբերականորեն ավելի բարձր աճի արդյունքում ՀՀ պետական բյուջեի եկամուտներում դրա տեսակարար կշիռն աճել է 0.06 տոկոսային կետով և կազմել 0.81%: Միաժամանակ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հարկային եկամուտների (ներառյալ՝ պետական տուրքերը) և այլ եկամուտների տեսակարար կշիռները նվազել են համապատասխանաբար 0.05 և 0.01 տոկոսային կետով և կազմել 93.99% և 5.20%:

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր տարեկան 1,648.1 մլրդ դրամ, իսկ ինն ամիսներին ՀՀ կառավարության կողմից հաստատված եռամսյակային համամասնություններով՝ 1,206.6 մլրդ դրամ ծախսերի կատարում: Ինն ամիսների ճշտված ծրագիրը կազմել է 1,275.7 մլրդ դրամ, որի դիմաց փաստացի ծախսերը կազմել են 1,053.0 մլրդ դրամ, այսինքն՝ պետական բյուջեն ծախսերի մասով ընթացիկ տարվա առաջին ինն ամիսներին թերակատարվել է 222.7 մլրդ դրամով կամ 17.5%-ով: Թերակատարման ընդհանուր գումարի 49.5%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, 50.5%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին:

Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերը (տնտեսագիտական դասակարգմամբ) 2019թ. ինն ամիսներին, մլրդ դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Առաջին ինն ամիսների պլան ³	Առաջին ինն ամիսների ճշտված պլան ⁴	Փաստ	Կատարման %-ը ճշտված պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1,206.6	1,275.7	1,053.0	82.5%
այդ թվում՝				
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	1,041.7	1,091.7	981.4	89.9%
այդ թվում՝				
Աշխատանքի վարձատրություն	119.8	123.5	116.9	94.6%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	143.7	155.1	113.0	72.9%
Տոկոսավճարներ	116.0	118.1	117.8	99.8%
Սուբսիդիաներ	74.6	79.9	76.1	95.2%
Դրամաշնորհներ	90.7	104.3	92.9	89.1%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	336.4	349.8	332.7	95.1%
Այլ ծախսեր	160.5	161.0	132.0	82.0%
ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ (ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ)	164.9	184.0	71.6	38.9%
այդ թվում՝				
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	164.9	184.0	72.0	39.2%
Հիմնական միջոցներ, որից՝	164.9	184.0	72.0	39.2%
Շենքեր և շինություններ	114.8	130.4	65.3	50.1%
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	47.7	50.0	6.0	12.1%
Այլ հիմնական միջոցներ	2.4	3.6	0.7	19.1%
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացված մուտքեր	-	-	-0.4	-

³ Հաստատվել է ՀՀ կառավարության 27.12.2018թ. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ: (Ցուցանիշները ներկայացված են առանց նշված որոշման վերաբաշխման հավելվածի:)

⁴ Հաշվի են առնված հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրության համաձայն կատարված փոփոխությունները:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 9.8%-ով կամ 94.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված կենսաթոշակների, շենքերի և շինությունների, պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման, տոկոսավճարների, աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 981.4 մլրդ դրամ՝ 89.9%-ով ապահովելով իննամսյա ծրագրի կատարումը: Ընթացիկ ծախսերը թերակատարվել են 110.3 մլրդ դրամով կամ 10.1%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրանք աճել են 8.9%-ով կամ 80.9 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից շուրջ 116.9 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը, որը կազմել է իննամսյա ծրագրի 94.6%-ը և 11.5%-ով (12.1 մլրդ դրամով) գերազանցել նախորդ տարվա ինն ամիսների ցուցանիշը:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով 2019 թվականի ինն ամիսներին ՀՀ պետական բյուջեից օգտագործվել է ծրագրով նախատեսված միջոցների 72.9%-ը՝ 113.0 մլրդ դրամ, որը 16.9%-ով կամ 16.4 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով: Հաշվետու ժամանակահատվածում 117.8 մլրդ դրամ ուղղվել է կառավարության պարտքի սպասարկմանը՝ կազմելով իննամսյա ծրագրի 99.8%-ը: Մասնավորապես՝ շուրջ 46 մլրդ դրամ (99.4%) տրամադրվել է ներքին պարտքի և 71.8 մլրդ դրամ (100%) արտաքին պարտքի սպասարկմանը (պարտքի սպասարկման ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 12.5%-ով կամ 13.1 մլրդ դրամով):

Ավելի խնդրահարույց է կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների) թերակատարումը, որն ըստ ճշտված պլանի՝ նախատեսվել է 184.0 մլրդ դրամ, սակայն իրականացվել են ընդամենը 71.6 մլրդ դրամի ծախսերը:

Կապիտալ ծախսերի թերակատարումը կազմել է 61.1 տոկոս կամ 112.4 մլրդ դրամ: Մասնավորապես՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են շուրջ 72.0 մլրդ դրամ, որոնց իննամսյա ծրագիրը կատարվել է 39.2%-ով: Կապիտալ ծախսերի թերակատարումը մեծ մասամբ պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի ցածր կատարողականով: Վերջիններիս շրջանակներում նախատեսվել է կապիտալ ծախսերի 53.3%-ը՝ շուրջ 98.1 մլրդ դրամ, որոնց կատարողականը կազմել է 25.3 մլրդ դրամ կամ 25.8%: Կապիտալ ծախսերի թերակատարումը պայմանավորված է ինչպես իրականացվող կապիտալ ծրագրերի անարդյունավետության և դրանց մեջ կոռուպցիոն ռիսկերի առկայության հետ, այնպես էլ կառավարության կառուցվածքի օպտիմալացման լույսի ներքո ԾԻԳ-երի փակման և դրանց կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակ տալու բարեփոխումների գործընթացի հետ:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴ

2019 թվականի ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 95.1 մլրդ դրամ հավելյալով՝ տվյալ ժամանակահատվածի համար ծրագրված 130 մլրդ դրամ և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 15 մլրդ դրամ պակասորդի դիմաց: Սա նշանակում է, որ պետական բյուջեի զսպող ազդեցությունը տնտեսության վրա դեռևս շարունակվում է: Այսպես, հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով՝ պետական բյուջեի պակասորդը պլանավորված ցուցանիշից շեղվել է 225.1 մլրդ դրամով:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ամփոփ ցուցանիշները 2019թ. ինն ամիսների ընթացքում, մլրդ. դրամ

	Առաջին ինն ամիսների պլան ⁵	Առաջին ինն ամիսների ճշտված պլան ⁶	Փաստ	Կատարման %-ը առաջին ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ
ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	1,084.8	1,145.7	1,148.1	100.2%
ԾԱԽՍԵՐ	1,206.6	1,275.7	1,053.0	82.5%
ԴԵՖԻՑԻՏ (ՊԱԿԱՍՈՒՐԴ)	121.8	130.0	-95.1	--

2019թ. ինն ամիսների տվյալներով հարկային եկամուտների գերակատարումը այլևս այդքան նշանակալի չէ, որքան նախորդ ամիսներին, մինչդեռ ծախսերը շարունակվում են թերակատարվել: Հետևաբար, բյուջեի հավելուրդի մեծ ծավալը հիմնականում պայմանավորված է ծախսերի ցածր կատարողականով, որի արդյունքում աճել են դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրներում նախատեսված բյուջեի ազատ միջոցները՝ ծրագրված 49.8 մլրդ. դրամի դիմաց կազմելով 146.4 մլրդ. դրամ, իսկ արտաքին աղբյուրներից նախատեսված վարկային միջոցներից ներգրավվել է միայն 32%-ը:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱԶԴԱԿԸ

Համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը 2019 թվականի ինն ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ունեցել է 1.5 զսպող ազդեցություն՝ պայմանավորված և՛ եկամուտների⁷ (-1.4), և ծախսերի (-0.2) զսպող ազդեցություններով:

⁵ Հաստատվել է ՀՀ կառավարության 27.12.2018թ. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ: (Ցուցանիշները ներկայացված են առանց նշված որոշման վերաբաշխման հավելվածի:)

⁶ Հաշվի են առնված հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրության համաձայն կատարված փոփոխությունները:

⁷ Եկամտային ազդակի հաշվարկներում ՀՀ պետական բյուջեի եկամուտներին ավելացվել են հարկերի միասնական հաշվի զուտ մուտքերը, որոնք համարվում են հարկ վճարողների կողմից փաստացի վճարված գումարներ:

6. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ հարկաբյուջետային քաղաքականության հիմնական խնդիրները դեռևս առկա են, և հետագա մակրոտնտեսական իրավիճակի վատթարացումից խուսափելու նպատակով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել իրավիճակը շտկելու համար:

2019թ. առաջին ինն ամիսների ընթացքում տնտեսական ակտիվությունը դեռևս շարունակում է մնալ բարձր՝ չնայած մի շարք խոշոր ճյուղերում (ծառայությունների, շինարարության և գյուղատնտեսության) իրական աճերը դանդաղում են:

Նման պարագայում հարկաբյուջետային քաղաքականությունը շարունակում է մնալ զսպող: Հարկային եկամուտների հավաքագրման աճի արագ տեմպերը նվազում են, իսկ ինն ամիսների արդյունքներով հարկային եկամուտները գերակատարվել են ընդամենը 1.7 տոկոսով՝ այն դեպքում, երբ հունվար-հունիս ամիսներին գերակատարումը կազմել էր 8.4%:

Ծախսերի կատարողականի մասով՝ տարեսկզբի միտումները շարունակվում են: Ընդհանուր ծախսերի կատարողականը կազմել է 82.5%, իսկ կապիտալ ծախսերինը՝ 38.9%: Ընդ որում, հիմնականում չեն իրականացվում արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող կապիտալ ծրագրերը: Ինչպես նախկինում բազմիցս նշել ենք, կապիտալ ծախսերի թերակատարումը բացասական ազդեցություն կարող է ունենալ ամբողջ տնտեսության արտադրողականության վրա՝ նվազեցնելով երկարաժամկետ տնտեսական աճի տեմպը: Հետևաբար, եթե թերակատարման պատճառը ծրագրերի ցածր արդյունավետությունն է, ապա կառավարությունը պետք է ջանքեր գործադրի կապիտալ ծախսերի իրականացման արդյունավետության հնարավորինս արագ բարձրացման և բյուջեի կատարողականի ապահովման ուղղությամբ:

ՀՀ պետական բյուջեի պլանից շեղվելու արդյունքում 2019թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական բյուջեն եղել է հավելուրդային, որը կազմել է 95.1 մլրդ դրամ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: